

4230

3Kg

9-40

1 DEC 2009

ժ. ԳԼԳԻ և Պ. ԼՍ.ՇԱՐԳ.

Handwritten signature

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

A. Bedikian

ԵՒ

ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս.
1907

ժ. ԳԷԳ. և Պ. ԼԱՃԱՐԳ.

0 2 JUL 2005

3K9
9-40

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԵՒ

ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

I

Նախնական մարդկային հասարակութիւնների մէջ, ինչպէս այդ ցոյց են տալիս նորագոյն հետազոտութիւնները, հողը և նրա արդիւնքները կազմել են ամենուրեք համայնական սեփականութիւն: Ծնունդ առնող անհատական սեփականութիւնը տարածւում է սկզբում միայն այն առարկաների վրայ, որոնք բացառապէս ծառայում են անհատի անձնական գործածութեան համար, ինչպէս, օրինակ, սպանւած գազանի կամ թշնամու ածիւնը, զարդարանքը, զէնքը և այլն: Իսկ սեփականատիրոջ մահից յետոյ այդ բոլորը թաղւում է սովորաբար նրա զիակի հետ միասին կամ այլուում է նրա զերեզմանի վրայ: Ուրեմն անձնական գործածութիւնը միաժամանակ թէ պատճառ է և թէ սահման անհատական սեփականութեան:

Հողի և նրա արդիւնքների մասնաւոր սեփականութիւնը համեմատաբար նորագոյն ժամանակի երևոյթ է: Այդ սեփականութիւնը ծանրաբեռնւած լինելով աւտտական կազմի մէջ ամեն տեսակ տուրքերով, ընդունում է իր իսկական բուրժուական բնաւորութիւնը միայն 1789 թւի ֆրանսիական յեղափոխութեան սկզբնաւորութեամբ: Նրա աստիճանական զարգացումը կատարել է բնականաբար ի վնաս կօլլեկտիվ կամ հասարակական սեփականութեան՝ բռնութեան և զաւթի միջոցով, որոնք գործադրել են դարեր շարունակ: Այնուամենայնիւ, նոյնիսկ կապիտալիստական ամենաառաջնակարգ երկրներում, անհատական սեփականութիւնը չի կարողացել կլանել ամբողջ կօլլեկտիվ սեփականութիւնը, ապա-



A. Bedikian
→ 44 ←

ցոյց այն իրողութիւնը, որ ամեն տեղ դեռ ևս գոյութիւն ունեն համայնական գոյքեր, արքունական անտառներ, համայնական հողեր և այլն: Ահա թէ ինչու Ֆրանսիական բանւորական կուսակցութիւնը իր ծրագրի ներածութեան մէջ խօսում է անհատական սեփականութեան մասին, իբրև գոյքի մի ձևի, որը երբէք չէ ունեցել մի ընդհանուր համատարած երևոյթի բնաւորութիւն:

Մանր հողագործութեան և մանր արդիւնագործութեան շրջանում անհատական սեփականութիւնը պահպանում է իր առանձնաշատուկ բնաւորութիւնը, և այդ կայանում է նրանում, որ աւարկաները ծառայում են բացառապէս սեփականատիրոջ անձնական գործածութեան համար: Գիւղացին, որ իր ձեռքով մշակում է իր հողի կտորը, ոստայնակը, որը արդիւնագործում է ձեռքի ոստայնի վրայ, նկարիչն իր վրձինով, հիւան իր ուրագով՝ ոչ թէ անձնական կամ օրինական, այլ իրական սեփականատէրեր են, որովհետև նրանք անձամբ են կործարում իրենց գոյքը. իրենք են իրենց պատկանող գործիքների տէրը: Այստեղ սեփականութիւնը միանում և նոյնանում է սեփականատիրոջ հետ, նրա արդիւնաւէտութիւնը կախած է սեփականատիրոջ անձնական եռանդից և ճարպիկութիւնից, և սեփականատէրը չէ կարող ձեռքերը ծալած նստել, կամ ձեռնալ կամ ոյժից ընկնել՝ առանց սեփականութեանը վնասելու: Այդ շրջանում սեփականատէրը օգտակար դեր է կատարում արտագրութեան մէջ:

Սակայն հողային սեփականութեան ընդարձակման և արդիւնաբերութեան եղանակի փոփոխման հետ (եղանակի, որ դանում է մեքենայական) սկսում է անհետանալ անձնակաճ սեփականութեան կործանական իրական և օգտակար բնաւորութիւնը: Երբ գիւղացու հողաբաժինը հարիւր, երկու հարիւր օրավարի չափ է ընդունում, այն ժամանակ այդ մշակում է ոչ թէ սեփականատէրն ինքը, այլ կապալառուն, բատրակը և օրավարձով աշխատող մշակը: Երբ ձեռքի ոստայնը տեղի է տալիս մեքենայական ոստայնին, ձեռքի սղոցը շրջաւոր-մեքենայական սղոցին, այն ժամանակ գործում ու սղոցում է ոչ թէ սեփականատէրն ինքը, այլ նրա վարձու բանւորները: Այդ վայրկեանից սեփականութիւնը դառնում է միայն անունով սեփականութիւն, նա դառնում է անւանական, օրինական: Սեփականատէրն այլ ևս ինքը չէ գործածում այն անձնապէս, նա այլ ևս անբաժան չէ սեփականութիւնից, որի արդիւնաւէտութիւնը այժմ արդէն չէ կախած սեփականատիրոջ անձ-

նական յարաբերութիւններից և չէ ֆուստուս վերջինիս անգործութեան, ձերութեան և հիւանդութեան պատճառով: Սեփականատէրն այլ ևս ոչ մի դեր չէ կատարում արտադրութեան մէջ: Նրա գործը այսուհետև կայանում է նրանում, որ նա կողոպտում է արդիւնաբերողներին, այսինքն նրանց, որոնք գործի գնելով նրա սեփականութիւնը, պէտք է համարէին այդ սեփականութեան անւանական կամ օրինական տէրերը: Իսկ այժմ բանւորների աշխատանքը ոչ միայն այնքան արժէք պէտք է ստեղծէ, որքան հարկաւոր է նրանց օրական գործածութեան համար, այլ և պէտք է ստեղծէ սեփականատիրոջ օգտին յաւելելով արժէք կամ շահ, որն այնքան աւելի է աճում, որքան աւելի է վարձու բանւորների թիւը և որքան աւելի նրանց շահագործում են:

Անւանական կամ իրաւական սեփականատէրը այլ ևս միայն լոկ շահագործող դառնալով, անխտիր կերպով կարող է փոխարինել մի ուրիշով՝ Նօրելը—Րօտշիլդով, Րօտշիլդը—Միսինսով. և սեփականութիւնը դրանից պակաս արդիւնաւէտ չի դառնալ: Սեփականատէրը կարող է նոյն իսկ գոյութիւն չունենալ, իբրև կան արարած. նա կարող է դառնալ մի որևէ առևտրական ֆիրմա, օրինակ «X և ընկ.» կամ բաժնետիրական ընկերութիւն, ինչպէս այդ գոյութիւն ունի երկաթուղային, հանքային, նաւթային և շատ ուրիշ ձեռնարկութիւններում: Այստեղ սեփականութեան իրաւունքը կարող է առանց որևէ ազդեցութիւն ունենալու ձեռնարկութեան վրայ՝ անցնել ձեռքից ձեռք և մի օրւայ ընթացքում փոխել մի քանի օրինական սեփականատէր:

Սրանով սեփականութիւնը վերջնականապէս կորցնում է իր անհատական բնաւորութիւնը կամ, այլ խօսքերով՝ արդիւնագործութեան առաջադիմութեան վարգայմամբ աւելի ևս աւելի դուրս է մղում սեփականութեան անհատական մեղք:

Սակայն նոյն այդ զարգացումը, որ ոչնչացնում է սեփականութեան անհատական ձևը, մշակում է միևնոյն ժամանակ նրա աւելի բարձր, հասարակական ձևը, որի համար նա հենց կապիտալիստական կազմի մէջ ստեղծում է իրականացման անհրաժեշտ նիւթական և ոգեկան պայմանները:

Երբ դեռ գոյութիւն չունէին ոչ շոգեշարժ գութանը, ոչ հրնձող և ոչ կաշտող մեքենաները և միւս երկրագործական գործիքները, դաշտերը կարող էին փոքրաչափ լինել և հէնց այդ պատճառով նրանք կարող էին անհատական սեփականութեան տարկայ լինել: Բայց երկրագործական մեքենաների տարածմամբ՝

21920.59



7.6

անհրաժեշտ է դառնում մշակել մեծ հողային տարածութիւններ, որոնք և գոյանում են նախկին մանր հողարածիւնների միացումից: Հողատիրութեան կենտրոնացումը դառնում է անխուսափելի և իսկապէս կատարւում է. *) իսկ այդ առաջ է բերուա հողի սեփականացումը ամբողջ հասարակութեան կողմից. դեռ չհնքխօսուեալ այն բանի մասին, որ հողային սեփականութիւնը բաժնետիրական ընկերութիւնների մէջ դառնում է բոլոր անդամների անբաժան սեփականութիւն, այլ կերպ ասած կօմժուենա:

Այդպիսի մի փոփոխութիւն, և դեռ էլ աւելի արագ, կատարւել է նաև արդիւնագործութեան մէջ. ձեռքի ոտտայնը, ճախարակը, սղոցը և արտադրութեան միւս նախնական գործիքները, որոնք կարող էին անհատական սեփականացման ենթարկւել, փոխարինւել են մանելու, սղոցելու և հիւնելու գործարաններով, որոնք միացնում են տասնեակ սղոցներ, հարիւրաւոր ոտտայններ և հազարաւոր ճախարակներ: Այդպիսով առաջ եկաւ արդիւնարեբական կենտրոնացում, որն առաջ է բերում արդիւնագործական աճագին մարմինների հասարակական սեփականացում, որոնք այժմ արդէն աւելի և աւելի են կորցնում անհատական սեփականութեան բնաւորութիւնը և դառնում են անբաժանելի սեփականութիւն շատ անձանց: Փորձեցէք, յիրաւի, որոշել թէ օրինակ երկաթուղու նման մի կօլլեկտիւ մեխանիզմի ո՞ր մասն է հոմապատասխանում ամեն մի բաժնետիրոջ անձնական սեփականութեանը:

Այդ կենտրոնացումը, որն օրէնք է հանդիսանում առևտրի, արդիւնագործութեան և հողագործութեան մէջ, նոյնպէս և ակցիօններական կօլլեկտիւիզմի այն տեսակը, որ նա առաջացնում է կազմում են սեփականութեան կօլլեկտիւ ձեւի այն նիւթական սոյնմաններ, որոնք ինչպէս վերը յիշեալ է՝ ստեղծուում են կապիտալիստական հասարակութեան զարգացման ընթացքում: Փորձիկ գաշտը և արհեստային գործիքը անհատական գործածութեան առարկաներ էին, այսինքն՝ մի մարդու անձնական ոյժը բուսական էր նրանց շարժման մէջ դնելու, նրանց որևէ արժէք հաղորդելու համար: Բայց խոշոր հողային սեփականութիւնը, մեքենական տախտակագործարանները, ոտտայնարանները անհրաժեշտօրէն հանդիսանում են հասարակական գործածութեան գործիքներ, որովհետև նրանց գոր-

*) Հողատիրութեան կենտրոնացման թէօրիան, որի պաշտպաններն են սօց-Քիմօկրասները, սխալ է. ինչպէս ցոյց են տալիս նոր ուսումնասիրութիւնները, հողը ոչ միայն չէ կենտրոնանում աւելի քիչ թւով անձանց ձեռքին այլ և մանր հողատերերի թիւը հետզհետեւ աճում է:

ծածութեան համար անհրաժեշտ է բանւորների հաւաքական աշխատանք, միահմուտ ոյժ:

Մինչդեռ սեփականատէր գիւղացին ինքը մենակ պիտի կատարի իր բոլոր աշխատանքները—և վարի, և ցանի, և հնձի, և այգի տնկի, և գինի պատրաստի. մինչդեռ առանձին արհեստաւորը, օրինակ ատաղձագործը, ինքը պիտի ընարի յարմար ծառ, ինքը պիտի նաշխ ու նկար հնարի կահ-կարասիքի համար, պատրաստի ու միացնի դրա առանձին մասերը, այժմ հողագործութեան և արդիւնագործութեան մէջ, շնորհիւ արտադրելու մեքենական եղանակի, բոլոր ամենամանր, ամենապարզ գործողութիւնները կատարւում են միաժամանակ բազմաթիւ առանձին բանւորների միջոցով: Խոշոր հողագործութիւնը պահանջում է քիմիկոսներ՝ հողը քննելու և պարարտացնելու համար, մեքենագործներ՝ շոգեշարժ գութանների համար, մասնագէտներ՝ սերմերի ընտրութեան համար և այլն:

Խոշոր մեքենական արհեստանոցը չէ կարող գոյութիւն ունենալ առանց տեսուչների, հաշւապահների, հնոցարարների, հասարակ մշակների, վերակացունների և այլն: Այդ արդիւնագործողներից և ոչ մէկն էլ չի կարող միայնակ պատրաստել ամբողջ իրը: Այդ արտադրելու համար հարկաւոր է բոլորի գործակցութիւնը մի չափով, որն անհնարին է որոշել: Կարելի է արդեօք իմանալ թէ մի արշին մահուզի վրայ գործադրած աշխատանքի ո՞ր մասն է կատարւած մեքենագործի, որ՞ը հասարակ բանւորի, ո՞րը վերակացուի միջոցով. դեռ չհնք խօսուեալ ոտտայնակի աշխատանքի մասին: Կատարելով զանազան տեսակի աշխատանք, այդ բանւորները բոլորն էլ համահաւասար անհրաժեշտ են այդ մի արշին մահուզի արտադրութեան համար: Չնայած նրան, կամ զուցէ հէնց այն պատճառով, որ այդ բանւորները պատկանում են աշխատանքի զանազան ձիւղերին, նրանք այնքան անհրաժեշտ են միմեանց համար, որ նրանցից ոչ մէկն էլ չէր կարող կատարել իր աշխատանքն ըստ իր հայեցողութեան: Հնոցապետը, օրինակ, չէ կարող աշխատանքի գնալ ժամը 10-ին, երբ ժամը 6-ից կամ 7-ից արդէն ոտտայնակները կանգնած են իրենց ոտտայնների առաջ և սպասում են, որ շոգին շարժման մէջ դնէ մեքենաները: Պէտք է ոչ մի հասկացողութիւն չունենալ ժամանակակից արտադրութեան մասին, որպէսզի երևակայել, թէ կապիտալիստական կամ մի այլ շրջանում անհատական ֆանտազիան կարող է տեղ ունենալ մեքենական ար-

հետանոցում, և ընդհանուր աշխատանքը կարող է սկսել կամ վերջանալ մի առանձին բանւորի քմահաճոյքով: Ամեն մի աշխատաւոր այդպիսի արհեստանոցի շէմքում—լինի նա տեսուչ, մեքենագործ կամ հասարակ բանւոր—հրաժարւում է իր կամքից, իր անհատականութիւնից և մանում է այնտեղ, իրրև բազմաթիւ մտնըր անիւններից մէկը այն հսկայական մեխանիզմի, որն իշխում է նրա վրայ և նրա միջոցով էլ շարժւում է:

Հաւաքական կամ հասարակական աշխատանքի անհրաժեշտութիւնը և բանւորների փոխադարձ կախումը միմեանցից կադմում են սեփականութեան հաւարական ձեւի այն հոգեկան տարրերը, որոնք ստեղծւում են կապիտալիստական հասարակութեան զարգացմամբ: Բայց դա դեռ բոլորը չէ:

ժամանակակից արտադրութեան ամենաբնորոշ երևոյթներէց մէկն այն է, որ արտադրող ոյժերի դեկավարութիւնը անցել է ոչ սեփականատէրերի կամ պրօլետարիների ձեռքը: Արդիւնադործութեան ամբողջ վարչութիւնը՝ գլխաւոր շտաբը (ճարտարապետներ, քիմիկոսներ, տեսուչներ, վարպետներ, վերակացուներ) գտնւում է վարձու աշխատաւորների ձեռքում: Նրանք կարող են գիտական կըրթութեան ամենաբարձր աստիճանների հասած լինել և արտաքոյ կարգի անձնական արժանաւորութիւններ ունենալ, բայց և այնպէս նրանք մնում են նոյն վարձկանները, ինչպէս և այն բանւորները, որոնց նրանք կառավարում են և որոնցից տարբերւում են միայն իրենց աշխատավարձի չափով: Այդ ծառայողների մեծամասնութեան ստոր ու գոռոզ վ՛րաբերմունքը դէպի իրենց այն աշխատակիցները, որոնք աւելի նւազ աշխատավարձ են ստանում, չի խանգարում, որ իրանք էլ վերջինների նման կատարելապէս ենթակայ լինեն անգործ սեփականատէրերի և զրամատէրերի իշխանութեանը, որոնց կամայականութիւնը նրանց համար նոյնպէս օրէնք է հանդիսանում, ինչպէս և միւս բանւորների համար: Այդպէս ուրեմն, արդիւնագործութեան մտաւորական տարրերը, ինչպէս և նրա մկանային տարրերը, մատակարարում է պրօլետարիատը. այդ հանգամանքի շնորհիւ՝ օր օրի վրայ կարող է վերանալ սեփականատէրերի ամբողջ դասակարգը, եւ նրանց սեփականութիւնը կօլլեկտիվ կամ հասարակական սեփականութիւն դառնալ, առանց որեւէ մաս պատճառելու արտադրութեանը:

Ամփոփենք մեր ասածները. մարդկային հասարակութիւնները իրենց ծագման օրից սկսում են իրենց գոյութիւնը հասա-

րակական կամ կօլլեկտիւ սեփականութեամբ: Անհատական սեփականութիւնը սահմանափակւում է սկզբում զուտ-անհատական գործածութեան առարկաներով (պաճուճանքներ, դէնք և այլն), ապա տարածւում է տան, հողի, գործիքների և կապիտալների վրայ և վերջապէս ընդունւում է իր կատարեալ բացարձակ ձևը բուրժուազիայի տիրապետութեամբ: Պէտք է նկատել սակայն, որ կօլլեկտիւ սեփականութեան նախնական ձևը երբէք վերջնականապէս չէ անհետանում:

Անհատական սեփականութեան ընդարձակման և մեքենական արտադրութեան ոգով համակելու հետ միասին անւանական կամ օրինական սեփականատէրը դադարւում է անմիջապէս գործադրել իր սեփականութիւնը և դառնում է այնպիսի մարդ, որը կողոպտում է վարձկաններին, որոնք անմիջապէս գործ են ածում այդ սեփականութիւնը, որովհետև մենակ դրանք են, որ արդիւնաւէտ են դարձնում այդ սեփականութիւնը:

Այդպիսով, անհատական սեփականութեան գոյութիւնը կորցնում է ամեն մի հիմք:

Միւս կողմից, քանի աւելի անհատական սեփականութիւնը ընդարձակւում է և ընկնում մեքենական արտադրութեան իշխանութեան տակ, այդ սեփականութեան գործածութիւնը աւելի ու աւելի հաւաքական ընաւորութիւն է ստանում: Նա, այդ գործածութիւնը, պահանջում է Ֆիզիկական և մտաւորական աշխատանքի մշակների հաւաքական ոյժերը, և այդ հանգամանքը հող է ստեղծում կօլլեկտիւ, կամ հասարակական սեփականութեան մի նոր աւելի բարձր ձևի համար, որը գոյանում է ի հաշիւ անհատական սեփականութեան նոյն անհրաժեշտութեամբ, որով անհատական սեփականութիւնը ստեղծել է ի հաշիւ նախնական ժամանակների հաւաքական սեփականութեան:

II

Մենք տեսանք, որ արտադրութեան միջոցների (գործարանները, հողը, խանութները) գործածութիւնը դառնում է աւելի ու աւելի հաւարական, այսինքն նա պահանջում է մարդկանց աւելի մեծ քանակութեան հաւաքական աշխատանք, մինչդեռ այդ միջոցների սեփականացման եղանակը շարունակւում է մնալ անհատական: Դրա հետեանքն է մի կողմից արդիւնքների կուտակումն ոչ-արտա-

դրող սեփականատէրերի (կապիտալիստների) ձեռքում, և միւս կողմից՝ ոչ-սեփականատէր-արտադրողներին-(աշխատաւորներին) բաժին է ընկնում աղքատութիւնը, որն աւելի ու աւելի է աճում արտագրութեան զարգացման հետ:

Բաւական է հէնց միայն այն, որ գործիքները, որոնց միջոցով կատարոււմ է բանւորների հաւաքական աշխատանքը, չեն պատկանում իրենց. դրանից արդէն բղխում է այն հանգամանքը, որ բանւորների ստեղծած բոլոր հարստութիւնը ընկնում են նւրբանց ձեռքից, բացի մի մասից, որն անպայման անհրաժեշտ է բանւորների կեանքը պահպանելու և սերունդ ունենալու համար:

Սակայն ձրիակեր կապիտալիստները շարունակ և անպատճառ ձգտում են կարելոյն չափ կրճատել մինչև անգամ այդ անհրաժեշտ ծախքերը, որ կաղմում են բանւորի աշխատավարձը, որովհետև այդ կրճատման միջոցով միայն կարող են նրանք իրենց եկամուտն աւելացնել: Այսպէս, նրանք ամեն կերպ աշխատում են որքան հնարաւոր է երկարացնել աշխատանքի օրը և հասցնել այդ այնպիսի սահմանների, որ մինչև անգամ բուրժուական կառավարութիւնները ստիպւած էին միջամտել օրէնսդրական ճանապարհով աշխատանքի ոյժի այդ տեսակ հարստահարումը սահմանափակելու համար: Արդիւնագործողների միջև տեղի ունեցող պայքարի կամ մրցման շնորհիւ, յաղթանակը տանում են նրանք, որոնք կարողանում են քամել իրենց բանւորներից կարելոյն չափ շատ չը վարձատրւած աշխատանք, որովհետև պտկասեցնելով այդ միջոցով արտադրութեան ծախքերը, նրանք աւելի շուտ, քան միւսները, հնարաւորութիւն կունենան էժան գներով վաճառել ապրանքները և այդպիսով իրենց ձեռքը գցել բոլոր գնողներին: Այդ պատճառով է, որ «բարի գործատիրոջ» համար եթէ միայն այդպիսին գտնւի, անկարելի է բարելաւել իր կինդանի մեքենաների գրութիւնը ամենաշնչին սահմաններից դուրս:

Փոխարէն այդ տեսակ բարելաւումների մասին հոգալու, կապիտալիստները, ընդհակառակը, մէկը միւսի ետևից մեղադրում են բանւորներին ծուլութեան և աւելորդ պահանջկոտութեան մէջ, որն իբր թէ քայքայում է ազգային արդիւնաբերութիւնը:

Նոյն նպատակով, այսինքն բանւորական ոյժը պահպանելու ծախքերը պակասեցնելու համար, գործարանատէրերը քարը քարի վրայ չեն թողել բանւորի ընտանեկան օջախում, խելով նրանից նախ նրա կնոջը, ապա երեխային, և դատապարտելով նրանց

գործարանային տաժանակիր աշխատանքի: Կանայք և երեխանքը աւելի էժանազին գործիքներ են, քան տղամարդիկ, և հէնց այդ պատճառով նրանք կամայ թէ ակամայ ներս են քաշել արդիւնագործութեան մէջ. մինչդեռ բուրժուական մարդասիրութիւնը՝ կամենալով քոյարիկ կապիտալիստական շահագործութեան սմբողջ այլանդակութիւնը, որը ոչ սեռ է խնայում և ոչ հասակ, շարունակում է պնդել, թէ դրանով բանւորական ընտանիքի բարեկեցութիւնն աւելանում է:

Նոյն միակ նպատակին են ծառայում նաև գործարանատիրոջ մտքած բոլոր տեխնիքական կատարելագործութիւնները: Աշխատանքը դարձնելով պարզ և աւելացնելով նրա արդիւնաւէտութիւնը, այդ կատարելագործութիւնները թոյլ են տալիս ձեռնարկողին «խնայողութիւն» անել բանւորների թւի մէջ; փոխարինելով հմուտ ուստի և բարձր վարձ ստացող բանւորին հասարակ մշակի, իսկ տղամարդուն՝ կնոջ և երեխայի միջոցով: Մեքենաները, մեքենական կատարելագործութիւնները այդպիսով դուրս են շարժում բանւորներին արհեստանոցից, և սովը ստիպում է նրանց աշխատել ամեն տեսակ պայմանով և ակամայ պատճառ դառնալ արհեստանոցի մէջ մնացած ընկերների աշխատավարձը իջեցնելու: Բանւորական ոյժի այդ մշտական արտաքսման հետևանքը վերջի վերջոյ այն է լինում, որ առաջ է դալիս աշխատաւորների չափազանց յաւելումն, արդիւնագործական պահեստի բանակ, որը հարկաւոր է կապիտալիստներին այն ժամանակ, երբ արդիւնագործութեան մէջ պահանջուում է տենդային աշխատանք: Այդ նոյն բանակից կապիտալիստներն օգտուում են սովորական ժամանակ աշխատավարձը կրճատելու և բանւորական օրը երկարացնելու համար: Այդ քանակի անդամ է դառնում ամեն մի բանւոր, որը ժամանակաւորապէս կորցրել է իր զբաղմունքը: Իսկ եթէ որևէ երկրում արդիւնագործական այդ յաւելումը չէ բաւականացնում, այդ դէպքում կապիտալիստները ամենալայն չափերով օգտուում են օտարերկրացիներից. և Բելգիայի, Իտալիայի, Գերմանիայի, իսկ ծայրայեղ դէպքում՝ Նոյնպէս և Չինաստանի սովից մեռնող թշուառները մատակարարում են նրանց այն աշխատող ձեռքերը, որոնց միջոցով նրանք կարողանում են իջեցնել բանւորական աշխատանքի գինը և սովամահ անել իրենց հայրենակիցներին:

Մեքենաների համաշխարհային տարածումը, որ դարձրել է աշխատանքը աւտօմատական և հարիւրապատկել կապիտալիստ-

ների օգուտը, աւել է վարձու արտադրողներին միայն այն, որ աւելացրել է նրանց աշխատանքի և զրկանքների քանակութիւնը: Որքան աւելի հարստութիւններ են ստեղծել բանւորները իրենց գործատէրերի համար, այնքան աւելի կարիք են ստեղծել իրենց համար: Բանւորների արտադրած ապրանքների ընդհանուրը աւելի և նոյն իրենց բանւորների սպառողական կարողութեան միջև եղած տարբերութիւնը հետզհետէ աճում է, որովհետև նրանց աշխատավարձը, որ սահմանափակւած է այնքանով, որքան որ հարկաւոր է նրանց գոյութեան համար, հնարաւորութիւն չի տալիս գնելու իրենց սեփական աշխատանքի արդիւնքը: միևնոյն ժամանակ այդ հնարաւորութիւնն աւելի ու աւելի պակասում է, քանի աւելանում է նրանց ստեղծած արդիւնքների քանակը:

Նոյն ուղղութեամբ կազդէ արհեստագիտական կամ այլ կըրթութեան տարածումը: Կատարելագործելով կենդանի մեքենաները, այսինքն բանւորներին, ընդունակ դարձնելով նրանց կատարել նոյն աշխատանքն աւելի կարճ ժամանակամիջոցում և աւելի քիչ բանւորների ձեռքերի օգնութեամբ՝ արհեստագիտական կրթութիւնը կաւելացնէ արդիւնքների քանակը ի հաշիւ արտադրողների, որոնք դատապարտուած կը լինեն նոր աշխատազրկութեան: Եւ այդպէս կլինի ամեն մի առաջադիմութեան նկատմամբ, ինչ շրջանում և նա կատարւի. ամեն անգամ այդ առաջադիմութիւնը կ'ուղղւի աշխատաւորների շահերի դէմ, և այդ կ'շարունակւի մինչև այն ժամանակ, քանի՜ վարձու աշխատանքի սխտեմը կը շարունակի իջեցնել նրանց գործիք լինելու աստիճանին այն անձանց ձեռքում, որոնք տէր են արտադրութեան միջոցների, այսինքն այնքան ժամանակ, մինչև իրենք բանւորները չը տիրանան արտադրութեան միջոցներին (հողին, գործարաններին, հազորակցութեան միջոցներին, նաւերին, բանկերին և այլն):

Արտադրող գասակարգի բոլոր ներկայացուցիչները, առանց սեւի ու ցեղի խտրութեան, կը լինեն ազատ, այսինքն իրենք իրենց տէրը և տէրն այն բոլորի, ինչ որ ստեղծւած է իրենց աշխատանքով, — միայն այն ժամանակ, երբ կը վերացնեն արտադրութեան միջոցների անհատական տիրապետութիւնը, փոխարինելով այդ կօլլեկտիւիստական կամ սօցիալիստական տիրապետութեամբ:

III

Արդէն հաւաքական գործածութեան առարկայ դարձած արտադրական միջոցների այդ սօցիալիզացիան կամ համայնացումը հնարաւոր է միայն կապիտալիստների դասակարգի էքսպրօպրիացիայի (սեփականութեան գրաւման) միջոցով:

Այն յեղափոխականները, որոնք մասսաներին չը վախեցնելու համար, խոյս են տալիս էքսպրօպրիացիա խօսքից, ինչպէս և այն սօցիալիստները, որոնք իսկապէս վախենում են էքսպրօպրիացիայից և փորձում են փոխարինել այդ առանձին համայնքների մըրցութեամբ կամ համապատասխան հասարակական հիմնարկութիւններով, չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ:

1. Որ ժամանակակից կապիտալիստական հասարակութեան մէջ կատարուող բոլոր փոփոխութիւնների ժամանակ էքսպրօպրիացիան մի ընդհանուր օրէնք է հանդիսանում:

2. Որ էքսպրօպրիացիան, որի մասին այստեղ խօսուում է, օրստօրէ աւելի հնարաւոր է դառնում, շնորհիւ ժամանակակից կազմի բնական և անհրաժեշտ զարգացման ընթացքի:

3. Որ այդ էքսպրօպրիացիան առաջին անգամ կատարւելիս, դրան ենթարկւածները կը վարձատուեն իրենց կորցրածի փոխարէն:

4. Որ նա աւելի ու աւելի անհրաժեշտ է դառնում՝ շնորհիւ արտադրութեան պայմանների:

Արդիւնաբերական պրօգրէսը, — մեր դարի այդ կուռքը, — առաջացրել է այն, որ էքսպրօպրիացիայի են ենթարկւել այն արհեստաւորները, որոնք երբեմն աշխատում էին իրենց տանը սեփական գործիքներով և իրենց հաշուով: Նրանք զրկւել են.

1. իրենց գործիքներից, որոնք նրանց ձեռքում այլևս անգործադիր դարձան և պիտանի եղան միայն իբրև վառելիքայայ (ճախարակներ, ռանգաներ, սղոցներ և այլն):

2. իրենց տեխնիկական ճարտիկութիւնից, որը նրանք ձեռք էին բերել երկար տարիների աշակերտութեամբ և որն այժմ կորցրել է ամեն զին՝ շնորհիւ մեքենական գործիքների:

3. իրենց ընտանեկան օջախից, որը դատարկւել է այն օրից, երբ կին ու երեխայ գործարան են մտել:

4. իրենց աշխատանքի պտուղներից, որոնք գործատէրերը՝

անհատական կամ հաւաքական (բաժնետէրեր, օբլիգացիօներներ և այլն) եկամուտի կամ դիվիդենտի անունով հաւաքել ու պահել են իրենց դրամարկղներում: Այս է ժամանակակից այն արտադրութեան զարգացման ուղին, որը կառուցանում է իր հզօրութիւնը աւերակների վրայ, խորտակելով մանր կարողութիւնները խոշորների միջոցով: Եւ այդ—մարդկային գործունէութեան բոլոր ասպարէզներում: Մեծ քաղաքների անազին վաճառատները պատմում են մեզ անթիւ, անհամար մանր խանութպանների սնանկութեան մասին. հսկայական երկաթագործարանները խորտակել են հարիւրաւոր և հազարաւոր դարբնանոցներ:

Սօցիալիզմը պահանջում է հակառակ էքսպրօպրիացիա՝ հարուստներին յօգուտ աղքատներին: Դա յափշտակիչ փոքրամասնութեան էքսպրօպրիացիան է յօգուտ կողոպուտող մեծամասնութեան, մի խօսքով՝ էքսպրօպրիատօրների էքսպրօպրիացիան:

Մնդիրը նրա մէջ է կայանում, որ պիտի վերադարձնել անազին մեծամասնութեանը այն, ինչ խլել է նրանից փոքրամասնութիւնը, այլ խօսքով՝ բանւոր մասսայի հարստահարիչները, որոնց թիւը շնորհիւ իրենց շարքերում տիրող մահաբեր մրցման օր օրի վրայ աւելի ու աւելի կրճատում է: Բացի այդ, հէնց իրենք կապիտալիստները զգալի չափով թեթեւացնում են սօցիալիզմի խնդիրը նրանով, որ դադարում են անմիջական մասնակցութիւն ունենալ արտադրութեան մէջ և աւելի ու աւելի օտար են դառնում նրան: Եւ այժմ ոչ թէ կապիտալիստները, այլ նրանց վարձու գործակալներն են ղեկաւարում արտադրութեան ընթացքը, հետևապէս եթէ նրանց զրկեն սեփականութիւնից, այդ ոչ մի ազդեցութիւն չի ունենալ երկաթուղիների, հանքերի, նաւթահանքերի, երկաթագործարանների, մանարսնների, ոստայնարանների և ուրիշ գործարանների վրայ, որոնք կը շարունակեն բանել առաջւայ պէս:

Միւս կողմից այդ էքսպրօպրիացիան կը լինի միակը, որ կը վարձատրի էքսպրօպրիացիայի ենթարկւածներին: Էքսպրօպրիացիայի մինչև այժմ կատարւած բոլոր այլ ձևերը եղել են առանց որևէ վարձատրութեան: Յիրաւի, ուր է մեքենական ոստայնաբանների միջոցով սեփականազուրկ եղած ձեռագործ ոստայնակների վարձատրութիւնը: Ո՞ւր է երկաթուղիների միջոցով սնանկացած քրէհարների վարձադրութիւնը: Ինչո՞վ են վարձատրւել ման-

րավաճառները, դերձակները, կօշկակարները և այլն, որոնք զբրկւել են սեփականութիւնից շնորհիւ խոշոր ձեռնարկողներին:

Իսկ ինչ վերաբերում է սօցիալական էքսպրօպրիացիային, նա կուղեկցւել մի շարք իսկական հասարակական, օգտակար հիմնարկութիւններով երեխաների, ծերերի, հիւանդների, և միւսների համար,—հիմնարկութիւններով, որոնցից կօգուեն հաւասարապէս նոյնպէս և նրանք, որոնք իբր թէ տուժել են, զո՞ են գնացել էքսպրօպրիացիային, այսինքն՝ նախկին կապիտալիստները: Սրանք կը լինեն բացի դրանից նաև հասարակական արտադրութեան և հաղորդակցութեան միջոցների հաւասար տէրեր և հաւասար աշխատանքի պայմանով՝ կուենան հաւասար իրաւունք հասարակական տրտադրութեան արդիւնքների վրայ:

Հասարակական էքսպրօպրիացիայի այդ պահանջը բղխում է ոչ միայն բանւոր դասակարգի աղքատութիւնից և նրա յաւելեալ աշխատանքից, որը մասնաւոր կամ կապիտալիստական սեփականութիւնը ստեղծում է բանւոր դասակարգի մէջ: Այդ անհրաժեշտութիւնը բղխում է նաև այն հանգամանքից, որ շոգիով և էլէքտրականութեամբ աշխատող ժամանակակից տեխնիկան զարգացրել է արտադրութեան միջոցները այնպիսի զօրութեամբ, որ դրանց սեփականատէրերի անհատական ոյժերը անկարող են հրսկել և կռաւարել այդ: Ընդհակառակը, արտադրութեան միջոցներն են, որ իշխում են իրենց՝ սեփականատէրերի վրայ, որոնք անկարող են համապատասխանեցնել արտադրւող արդիւնքների քանակը սպառողական պահանջին. արտադրութեան միջոցները ստիպում են նրանց լցնել վաճառանոցները ապրանքներով և այդպիսով առաջացնել ճգնաժամներ, որոնք ցնցում են ամբողջ հասարակական կազմը աւելի ուժեղ և աւերիչ կերպով, քան պատերազմներն ու համաճարակները: Այդ ճգնաժամները կարելի է վերացնել միմիայն այնպիսի հասարակութեան մէջ, որը հանդիսանում է լիակատար տէր իր արտադրութեան միջոցների և հասարակական աշխատանքի արդիւնքների:

IV

Բայց իրենց օգտին էքսպրօպրիացիա անող բոլոր անձանց այն էքսպրօպրիացիան, որը պիտի ծառայի հասարակութեան օգտին, կախումն ունի մի այլ խնդրից: Այդ այն է, որ քաղաքական իշխանութիւնը պի-

տի նախօրօք գրաւած լինի արտադրող դասակարգի կողմից, որը հաղմակերպել է իբրև Բանւորական Կուսակցութիւն: Բուրժուազիան, որ պաշտպանում է իր սեփականութիւնը միմիայն իր ձեռքին գտնուող պետական իշխանութեան օգնութեամբ, պիտի նախ ենթարկէ քաղաքական կամ պետական էրոպրօպրիացիայի, ապա միայն՝ տնտեսական:

Եւ այդտեղ, այդ հողի վրայ ևս իրերի ընթացքը զգալի չափով թեթեացրել էր բանւոր դասակարգի անելիքը: Առաջւայ ժամանակները—մօտ երեսուն տարի առաջ—բարձրագոյն բուրժուազիան աշխատաւոր մասսայի մէջ՝ յանձին ծաղկող մանր բուրժուաղիայի՝ յենարան ու պաշտպանութիւն էր գտնում բանւոր դասակարգի յուզմունքների դէմ: 1848 թւին միջին դասակարգը, ոչ միայն Պարիզում, այլ և գուառնեբում, սոքի կանգնեց, իբրև մի մարդ, յունիսեան ապստամբների դէմ:

Իսկ ինչպէս պատասխանեցին կապիտալի նոր իշխանաւորները այդ ծառայութեանը, որը նրանց համար ոչ այլ ինչ էր, բայց եթէ փրկութեան վերջին խարխալ: Նրանք վերին աստիճանի ապերախտ գտնեցին դէպի իրենց դաշնակիցներն ու փրկողները. խոշոր առևտուրը ջախջախեց մանր խանութպաններին, խոշոր արդիւնաբերութիւնը կոտրեց մանր արտադրողների վիզը, խոշոր ֆինանսական ձեռնարկութիւնները մաքրեցին մանր և նոյն իսկ միջակ կապիտալիստների գրպանները: Եւ հէնց այդ ժամանակ մանր բուրժուազիան ոչ միայն հնարաւորութիւն՝ չունեցաւ պաշտպանելու խոշոր բուրժուազիային յեղափոխական պրօլետարիատից, այլ և ինքը, անընդհատ զրկելով սեփականութիւնից, ընկաւ թշնամի բանակի շարքերը: 1871 թւին մարտի 18-ի հակաբուրժուական շարժումը պաշտպանող 200,000-ից ուելի ընտրողական ձայների աւելի քան կէսը պատկանում էր մանր առևտրի և մանր արդիւնաբերութեան ներկայացուցիչներին:

Գուառնեբում մանր բուրժուազիան ընդհանուր առմամբ ամենայն համակրանքով էր վերաբերում Պարիզի ապստամբութեանը. մի քանի քաղաքներում նա օժանդակում էր յեղափոխութեանը իր գէնքով. իսկ Պարիզում բուրժուաները իրենց ամբողջ կեանքում առաջին տնգամը գնում էին կուելու բանւորների հրամանատարութեան տակ:

1848 թւին ազգային զվարդիան Պարիզում և նահանգներում անխնայ շարդում էր ապստամբներին: 1871-ին, չը նայած

ի՞նչ բազմանգամ արած կոչերին, չը նայած արտասովոր վարձատրութեան խոստումներին, Տիեբը չը կարողացաւ դրդել բաղաքացիական միլիցիայի մասերից և ոչ մէկին՝ գնդակահարել պարիզեան «կոմունարներին»:

Բարձր բուրժուազիան, որը չը գիտէ և չէ կարողանում անձամբ պաշտպանել իրեն, ստիպւած էր գնել այդ պարտականութիւնը ոստիկանութեան, ժանդարմերիայի և գերի զինւորների վրայ. այդ այն գերիներն էին, որոնց Բիսմարկը, պարիզեան պրօլետարիատին ձնշելու գործում՝ Վերսալի կառավարութեան այդ դաշնակիցը, զիջել էր Ֆրանսիական արդիւնաբերութեանը, փոխարէն վերջինիս իրեն աւած շահերի: Առաջ բարձր բուրժուազիան, բանի դեռ չէր կորցրել իր գօրութիւնը և մի ամբողջութիւն էր կազմում մանր բուրժուազիայի հետ, պահանջում էր ազգային զվարդիայի կազմակերպումն: Նա հպարտութեամբ էր պաշտպանում անձամբ իր կեանքն ու գոյքը:

Այժմ բուրժուազիան ստորութեան այն աստիճանին է հասել, որ այլ ևս չը տեսնելով իր խարդախութեան գոհերի՝ մանր բուրժուաների կողմից պաշտպանութիւն, պահանջեց ազգային զվարդիայի լուծումն, իբրև ապահովութեան անհրաժեշտ պայման. թէպէտ և այդ զվարդիան միշտ եղել է և չի կարող այլ բան լինել, բայց եթէ զուտ բուրժուական միլիցիա, որովհետև «զինւոր խաղալու» համար անագին ժամանակ է հարկաւոր, որից բանւորները, ինչպէս յայտնի է, զուրկ են, իսկ բուրժուաները շատ ունեն: Գվարդիայի այդ լուծումն աւելի ևս նշանակալից է, որովհետև տեղի է ունեցել մի հանրապետական երկրում:

Իր կողպատած ամբողջ հարստութիւնը պաշտպանելու համար՝ բարձր բուրժուազիային ֆուտ է ոստիկանութիւնն ու զօրքը: Սակայն ոստիկանութիւնը, որ բաւական ուժեղ է անմեղ ցուցարարների դիմաց, միանգամայն անօգնական է զգում իրեն այն մարդկանց դէմ, որոնք կռիւ են մտնում նրա հետ: Իսկ ինչ վերաբերում է զօրքին, կարելի է ասել, որ եթէ նա գոյութիւն ունեցող կազմը այսօր պաշտպանում է, վաղը կապստամբի նրա դէմ: Հետզհետէ ընդգրկելով ազգաբնակչութեան ամբողջ պիտանի մասը, նա, այդ զօրքը, վարժեցնում է բանւորներին զէնքի գործածութեան և պատերազմական բոլոր գործողութիւններին. այլ խօսքերով՝ նա պատրաստում է վարժ ու հմուտ զինւորներ ապագայ բանւորական յեղափոխութեան համար:

Եւ իսկապէս, միայն և միայն յեղափոխութիւնը թոյլ կը ապարտագրողները դասակարգին տիրանալ քաղաքական իշխանութեանը և նրա օգնութեամբ ի կատար ածել կապիտալիստական Ֆրանսիայի էքսպրօպրիացիան, ինչպէս և հասարակութեան բոլոր արտագրողական ոյժերի ազգայնացումը կամ հասարակականացումը: *)

Այդ յեղափոխութիւնը առաջ չի գայ ոչ ուժերով ուղեկցուող ծանուցումներով, ոչ առանձին անհատների հերոսական խնդրութեամբ, ոչ տեղական ընդհարումներով ոստիկանութեան հետ, ոչ մասնակի գինւած ապստամբութիւններով. նա կը կատարուի անխուսափելիօրէն: Միւս կողմից, նրա գալուստը չէ կարելի ոչ խանգարել, ոչ էլ յետաձգել, ոչ այն քաղաքատնտեսական յերիւրւածքներով, որոնք հնարուած են արմատականութեան և պօստիբիլիթի պարագլուխների կողմից, ոչ էլ բանւորական հարցին վերաբերող այն բէֆօրմների միջոցով, որոնց անալոյման անհրաժեշտութիւնը ընդունուած են նոյն իսկ բուրժուական պետութիւնները **): Նա կը պոսթիկայ, իբրև հետեանք միջազգային բաղաքական ընդհարումների և անխուսափելի պերտուրբացիաների, որոնք նախապատրասուուած են Եւրօպայի արդիւնաբերական զարգացմամբ և Ամերիկայի ու Աւստրալիայի երկրագործական մըրցմամբ:

Բայց եթէ ոչ ոք, ոչ միայն մի առանձին անհատ, այլ և ոչ

*) Չանաղան թիւը մեկնութիւններից խոյս ապու համար, մենք անհրաժեշտ ենք համարուած չէնց այժմ և եթ նկատել, որ յեղափոխութեան հետեւալ օրը հնարաւոր կը լինի էքսպրօպրիացիայի ենթարկել միայն նրանց, որոնք աէր են արտադրութեան կօլլեկտիւ միջոցների, ինչպէս, օրինակ, խոշոր հողատերերին, գործարանատերերին, բանկային, երկաթուղային և հանքային ձեռնարկութիւնների բաժնետէրերին ու օրլիգացիօներներին:

Ոչ մի յեղափոխական կառավարութիւն չի կարող և չի ուզելալ գրաւել հողագործ-գիւղացու հողը, մանր արհեստաւորի գործիքները. բայց յեղափոխական կառավարութիւնը, որ իր կողման բարձրութեան վրայ կը լինի, կազատի նրանց վաշխառուների և վաճառականների լծից, որոնք նրանց կողողում են: Նա կը մերժի օգնել գիւղացու ու արհեստաւորի այնքան ծանր ու անշուքահալ աշխատանքին մինչև այն ժամանակ, երբ կաշոյի համադրել նրանց, օրինակները միջոցով, թէ որքան առաւելութիւն ունի կօլլեկտիւ արտադրութիւնը, համեմատելով անհատականի հետ:

**) Մենք չենք կարող ընդունել ոչ այն տարերականութիւնը, որով իբր թէ կատարուելու է յիշեալ յեղափոխութիւնը, ոչ էլ առնատարակ մարքսիստական ճակնտագրականութիւնը (Ֆրատալիզմը) հասարակական զարգացման ընթացքի վերաբերմամբ: Մենք անալոյման ընդունուած ենք նաև գիտակցութեան գաղափարական գործօնի ազդեցութիւնը: Ման. «Յոսոջի»:

մի կուսակցութիւն կարող չէ առաջացնել կամ խափանել մի յեղափոխութիւն, նման նրան, որը թագնւած է XIX դարի ներսերում, այնուամենայնիւ անխուսափելի տնտեսական յեղաշրջման գիտակցութեամբ համակալած կուսակցութիւնը կարող կը լինի վրեցնել իր վրայ այդ յեղաշրջումը ղեկավարելու դերը:

1848-ի փետրուարի 24-ին և 1870-ի սեպտեմբերի 4-ին Ֆրանսիական բանւորները, որ դեռ բաւարար չափով գիտակից չէին, թոյլ աւել «Ժամանակաւոր կառավարութեան» և այսպէս կոչուած՝ «Ազգային Պաշտպանութեան» մէջ նստած բուրժուաներին հաստատուել չէնց նոյն հրապարակի վրայ, որի վրայ դեռ սաւառնուած էր իրենց միջից ելած թագաւորի և կայսեր ոգին:

Իսկ երբ բանւորները, հիասթափուած ու ապարդիւն սպասելուց յոգնած, գէնքի դիմեցին, որպէս զի պահանջեն այն, ինչ որ ամենայն իրաւամբ իրենց էր պատկանում, արդէն չափազանց ուշ էր:

Այդ բանը նրանց շատ շուտով ապացուցեցին նոր կառավարիչները, որոնք ոչ այլ ինչ էին, բայց եթէ սեփականատէրերի մի նոր տիպ: Այդ կառավարիչները կարողացել էին արդէն ամբաջնդել և հաւաքել իրենց շուրջը այն ֆրակցիաները, որոնք դեռ ոչ այնքան հեռու անցաւում կուուած էին կապիտալիստների դասակարգի դէմ. նրանք մինչև այն աստիճանի պատրաստ էին արեան մէջ խեղդել բանւորների բոլոր պահանջները, որ համարձակեցին ընդառաջ գնալ դէպքերին և իրենք առաջ բերին պոսթիկոււ, փակելով այդ նպատակով ազգային արհեստանոցները և գիշերային յարձակում գործելով Մօնմարտում դրւած թնդանօթների վրայ:

Ոչ 1848-ին, ոչ 1870-ին պրօլետարիատը պատրաստ չէր իր վրայ վերցնելու յեղափոխութեան ղեկավարութիւնը: Լինելով ընդունակ յաղթելու, նա անընդունակ էր օգուելու իր յաղթութեան պտուղներից, որովհետև չունէր ոչ որոշ ծրագիր, ոչ էլ կազմակերպութիւն: Եթէ նոյն իսկ ենթադրենք, թէ նրան կաշտուէր լիովին տիրանալ Պարիզին, այնուամենայնիւ ղեկարտամենտներում, որոնք կառավարոււմ էին ինքնավարական հիմունքներով, նա չէր գտնիլ անհրաժեշտ դրամական օժանդակութիւն. բացի դրանից, նա չէր գիտենալ, թէ ինչ տեսակ տնտեսական բարեփոխութիւններ է անհրաժեշտ այժմ և եթ իրագործել: Իշխանութեան ղեկն իր ձեռքին պահելը ցոյց կը տար միայն նրա անզօրութիւնը: Նրա յաղթանակը կը լինէր միայն վաղանցուկ: Ամբողջ դժւարութիւնը յեղափոխական ժամանակներում կայանում է ոչ թէ իշխանութիւնը գրաւելու, այլ այն պահպանել կարողանալու մէջ:

Պրօլետարիատը, իր ձեռքը գցելով իշխանութիւնը, կը պահպանի այն չափով միայն, որ չափով որ արդիւնաբերութեան կենտրօնները կը բարձրանան նրան հետ միասին և միմեանց փո-



ԼԲ

207

խաղարձաբար կօժանդակեն. որ չափով որ մեր գործոն ու առաջ-
ընթաց զօրագունքը կազմող այդ կենտրոններում կը գտնուեն մար-
դիկ, որոնք պարզ կերպով հասկանում են այն գործը, որը պի-
տի կատարել, և որոնք, իսկապէս, հէնց տեղն ու տեղը կատա-
րում են այն:

Եւ դրա համար էլ հէնց անհրաժեշտ է, որ երկրի մի ծայ-
րից մինչև միւսը բանւոր դասակարգի բոլոր մտածող գլուխները
կարելիին չափ լաւ ծանօթանային կապիտալիստական էքսպրո-
պրիացիայի և ազգային իւրացման գործի հետ, որը նրանց բաժին
կընկնի ոչ հեռու և օրըստօրէ մեզ մօտեցող ապագայում. անհրա-
ժեշտ է, որ նրանք միևնոյն ժամանակ կատարեալ համաձայնու-
թեան եկած լինեն բարեփոխումների առաջին շարքի վերաբեր-
մամբ, որը հարկաւոր է անյապաղ իրագործել:

Այստեղից էլ ծագում է մի ընդհանուր ծրագիր, ընդհա-
նուր այն նպատակի տեսակէտից, որին նա ձգտում է, և գոր-
ծողութիւնների այն մեթօդի տեսակէտից, որով անհրաժեշտ է
ղեկավարել, իշխանութիւնը ձեռք պցելու գէպքում:

Այդ ծրագրի գաղափարների տարածումն է, որին նւիրում է
«Բանւորական կուսակցութիւնը». և այդ կուսակցութիւնը ոչ այլ
ինչ է, բայց եթէ իր տեսակի մի գործակալ, որն անդամներ է
գրաւում բանւորական բանակի մէջ իր ձեռքին ունեցած բոլոր
միջոցներով, այն է՝ բերանացի պրօպագանդով (ժողովներ, դասա-
խօսութիւններ), գրաւոր պրօպագանդով (գրքեր ու մամուլ) և գոր-
ծի պրօպագանդով (ընտրութիւններ, գործադուլներ և այլն):

Եթէ, յիրաւի, բանւորական կուսակցութիւնը մասնակցում է
ընտրողական պայքարին, պատճառն այն չէ, որ նա ձգտում է ա-
պահովել իր համար պապամաւորական տեղեր, որոնք նա ամե-
նայն պատրաստակա՛նութեամբ զիջում է ամենտեսակ բուրժու-
աների. դրա պատճառն այն է, որ ընտրողական պայքարի ժամա-
նակ նրա համար բացում է լայն հնարաւորութիւն՝ իր կրթող
ներգործութիւնն անել մասսայի այն մասի վրայ, որն ամենից
շատ անտարբեր է դէպի քաղաքականութիւնը. բացի դրանից, ընտ-
րողական շրջանները ծառայում են իբրև լաւագոյն միջոց՝ լոյս
աշխարհ հանելու բուրժուազիայի գլխաւոր ղեկավարներին, ցոյց
տալու նրանց իսկական դէմքը և մերկացնելու նրանց ամբողջ ան-
բարեխղճութիւնը կամ սնանկութիւնը: Եւ եթէ մեզնից ոմանց պա-
տահմամբ աջուղէր ընկնել ներկայացուցչական ժողովը (պարլա-
մենտ), մենք կը մտնէինք այնտեղ միայն նրա համար, որ այդ
ամբիօնի բարձրութիւնից շարունակենք էքսպրօպրիացիայի մեր
պրօպագանդը, կօլլեկտիւիզմի կամ կօմունիզմի պրօպագանդը և
ամեն անգամ պատին սեղմենք, հէնց նոյն իրենց պարլամենտա-
բիզմի պատին, մեր բուրժուական կառավարիչներին, որոնք
անխզելի կերպով կապւած են բուրժուա-սեփականատէրերի հետ:



